

1891

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ

ՄԱՐՏ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՀԱՅ – ՎԵՆԵՏ

(Shu j'ez 17)



ԲԵՆԻ ԳԵ ՆՈՐ ՊԱՐԳԵԱԳՐԱԸ՝ ՀԱՅՈՅ ՈՒ ՎԵՆԵՏԱՅ ԴԷՂ
 ՀԱՇՏՈՒԹԻՒՆՆ և մտերմութիւն վերահաստատուելով,
 Հասարակապետութիւնն իսկոյն որոշեց ընծաներ զըր-
 կել առ թագաւորն և առ պարոն Օշին, որ յետ Հեթ-
 մոյ՝ նախապատիւ համարուած էր արքային հօրեղբարց
 ԴԷՂ, ուր Հեթում միանձնական կեանքով ու վարքով հրաժա-
 րած էր ի փառաց և յընծայից. վճիռը կը սահմանէր՝ որ եթէ ըն-
 ծայից ծախքը ձրիատուր չըլլան, կէս առ հարիւր սակէն հայթհայ-
 թին. գէթ այսպէս կը հասկանամ վճուոյն խօսքը (2. 2. missa fue-
 rant): Սակայն շուտով լուր հասաւ՝ Հայոց մատաղահասակ թագա-
 ւորին աղիտալի սպանմանն, ինչպէս նաև իր մենտորին և աւագ հօ-
 եղբօրը Հեթմոյ՛Բ, որոյ խոհական առաջնորդութեամբ և պաշտպա-
 նութեամբ կը յուսայր Սիսուան զգօն և երջանիկ թագաւոր մը ու-
 նենալ. այլ այն պայծառ ծաղիկը իր բողբոջին ԴԷՂ կտրուեցաւ, մա-
 նաւանդ թէ անասնաբար ոտնակոխ եղաւ՝ Պիլարիու թաթար զօ-
 րավարէն դաւաճանելով ի մահ (1307, նոյեմբ. 27). զոր կարելի
 չըլլալով առանց արտասուաց յիշել, և ոչ անարտօսը հարկ է լռել, և
 կամ ազնուական մխիթարութիւն մը սեպել՝ սպանչին արժանաւոր

պատուհասը սպանմամբ՝ թաթարաց մեծ զանին հրամանաւ, ու լեւոն Գ. թագաւորին մնացած երկու հօրեղբարց, և Հեթմոյ խեղեփեղբարց, Օշնի և Ալինախայ իրաւացի պահանջմամբ. որ ըստ բնութեան արգանդակիցք՝ առաւել քան զբնութիւն մեծ յարգ և սէր ունէին իրարու վրայ, մինչև իրարու առաջարկել արքունական թագը, որուն թերեւս վայրկեանք ինչ ժամու միայն՝ ժառանգութեան իրաւանց վրայ խտիր ու զանազանութիւն կը գնէին. բայց կայտառ երիտասարդն Ալինախ որ քանի մը վայրկեան յետնածին էր, ազնուապէս յարգելով եղբօրը իրաւունքը, թողուց Օշնի զթագն. ուստի մեծաշուք հանդիսիւ պսակեցին զնա երբ Ալինախ՝ թաթարաց մեծ զանին հաւանութիւնն առնելով դարձաւ ի Հայաստան (1308), վենետկոյ հասարակապետութիւնն ալ իր կողմանէ փութաց ի մեծարանս նորապսակ արքային ու հարազատին և իշխանացն Հայոց. և Օշնի թագաւորելէն քանի մը ամիս ետքը՝ սահմանեց (1308 սեպտ. 5) Զովհաննէս Ֆոսդարինի նոր դեսպանին ձեռքով ընծաներ զրկել տասնութէկ լիպրա կրօսից արժէիւք. դեսպանին պիտոյից համար ալ իննետասն կրօս որոշեց, եւ որովհետեւ Ֆոսդարինի, ինչպէս թուի, ի կորոն էր այն միջոցին, Պետրոս կրատենիկոյ դուքս գրեց առ նա (1308 սեպտ. 22) իր խորհրդակցայն ու հասարակապետութեան հաւանութեամբ, երթալ դեսպանութեան պաշտամամբ առ թագաւորն. Հայոց, իշխանութիւն ալ տալով փոխառութիւն ընելու՝ յորոց և իցէ, ի վենետաց և կամ օտարաց, խոստանալով անոնց ի վենետիկ գալէն կամ պահանջելէն երկու ամիս ետքը հատուցանել, նոյն օրը կը գրէ դուքսն և առ Օշնի թագաւոր՝ յանձնելով նմա զնոր դեսպանն. գրեց և առ Ալինախ, աղաչելով որ իր խնամքն անպակաս ընէ Ֆոսդարինեայ վրայ, նոյն ոճով, միայն անուանց ու պաշտամանց փոփոխութեան զանազանութեամբ, գրեց և առ Հեթում տէր կոռիկոսի, որ հետաքննական երկասիրութեամբն Պաւլոս քեաւն Արևելից (Historia Orientalis) իբրու հայ Մարկոս - Պօղոս մը ծանօթ էր արեւմտեայց, և իր համանուն հօրեղբօրդոյն նման (Հեթմոյ Բ.) առանձնանալով ի վանս Պրէմոնստրատեանց, նախաւեծար ընտրեւ էր զվարս կրօնաւորութեան քան զփառս արքունեաց, Գրեց և առ Հեթում տէր Նղրոյ, որ և հազարապետ էր տէրութեան Հայոց (Capitano). և որ առաւել զարմանալի է, նաև առ Հեթում Բ., չգիտնալով թէ արդէն մեռած էր նա՝ իր եղբօրդոյն լեւոն Գի հետ, եթէ գրուածն՝ օրինակողաց անմտադրութեամբ կրկնագիր պատճէն մը չէ առաջին նամակաց, ինչպէս հաւանական կ'երևնայ:

Ֆոսդարինի դեսպանութեան երթալը ուշացաւ, կարծեմ նախ հիւանդանալուն պատճառաւ և ապա պատրաստութեանն ի չու, և մահուամբն բոլորովին խափանեցաւ. թերեւս կերպով մը պատճա,

աւելցաւ Հայոց ընդ կիպրացիս գժտուելէն, որոց երկուքին ալ բարեկամ էր Հասարակապետութիւնն, և որ երկու ազգաց նոյն ժամանակաց պատմութեան մէջ մեծ և նշանաւոր դէպք մը կը համարուի, և այն պատճառաւ երկար գրութիւնք եղած են առ միմեանս, առ Պապն Հռովմայ, առ օտարս, և առ նոյն իսկ Հասարակապետութիւն վենետիկոյ. առ որս յետոյ կը գրէր և կ'աղերսէր նաև կիպրոսի թագաւորին կին՝ դշխոյն իզապէլ, ազատել իր ամուսինը զարգելեալն յաշխարհին Հայոց (1310 օգոստ. 20): Օտար ըլլալով մեր նպատակէն այս դիպուածոց և գրութեանց վրայ յերկարել, զհետաքննողս կը զրկեմք առ Մասլադրի (Histoire de Chypre, II. 116). Տարի ու կէս վրան անցնելէն ետքը՝ փոխանակ Ֆոսգարինիի վախճանելոյ՝ պայլ և դեսպան ընտրուեցաւ Գրիգոր Տոլֆին, որ (երբեմն Գէորգ ալ կոչուած է), ի վերջ կոյս ապրիլի կամ ի սկիզբն մայիսի, սահմանելով նմա թոշակ իբրու դեսպանի ևեթ: Եւ որովհետև առ թագաւորն Հայոց զրկուելիք ընծաները մնացեր էին ի Կորոն, կը գրէ դուքսն (1310 մայիս 12) առ բերդապանն (Castellan) Կորոնի և Մոթոնի, որ նոր դեսպանին յանձնէ ղանոնք, յորս կ'երեւնայ թէ կայր նաև վրան (tenda) մի. իսկ ի վախճանելոյն մնացած ինչքը պահել, մինչև իմացընեն ինչ ընելիքը: Երկրորդ օրը կը գրէ առ թագաւորն Օշին (1310 մայիս 13), յանձնելով նմա զՏոլֆին իբրու Պայլ. իսկ իբրև դեսպան առանձինն կը գրէ՝ ազաչելով մօտիկ ընել քանի մը խնդրուածոց՝ զոր բերանացի կամ գաղտ յանձնած էր նմա: Ինչպէս յառաջնումն, այս անգամ ալ կը գրէ և առ այլ իշխանագունս երկրին, և մի և նոյն օրուան մէջ նախ քան զամենեսին առ Հեթում՝ զունդաստապլ, ոչ միայն յանձնելով նմա զՊայլն, այլ և առանձինն շնորհակալ ըլլալով որ մեծապէս խնամարկութիւն կ'ընէ վենետաց, ինչպէս պատմեր էին ազնուատոհմն Նիկողայոս Մորոզինի և այլք: Այսպէս ողորով կը գրէ և առ միւս Հեթում՝ տէրն Նղրին, վասն զի երկուքն ալ հզօրք էին և մեծահարկիք ի պետութեան Հայոց:

Այս առթիւ և ի նմին աւուր կը գրէ դուքսն նաև առ Պայլն Նէկրոբոնդի այն խնդրոց համար՝ որ պիտի դիւրացընէին Հասարակապետութեան բարեկամութիւնն ընդ Հայս. և էր՝ ստիպել զՅովակիմ Սանուտոյ, որ երկու խալէիւք կողոպտեր էր զՀայս և զԿիպրացիս, և որք իրենց վրէժն առնելու համար բանտեր էին զվենետս, որպէս զի իրեք ամսու միջոցի մէջ գայ առ դուքսն հաշիւ տալու իր ըրած զործոյն, ապա թէ ոչ՝ յանցաւոր պիտի համարուի: Թերեւս այս և ուրիշ խնդրոց համար Օշին թագաւորն ալ դեսպան զրկեր էր ի վենետիկ զզօրականս Գերարդ և զՆիկ. Մորոզինի, յորոց դուքսը ըսեց զամենայն, և ինքն յանձնեց անոնց (1310 մայիս 14) բերանացի պատասխանել թագաւորին. և որովհետև Օշին միջնորդութիւն ալ ըրեր էր առ Քահանայապետն ի նպաստ վենետաց, քիչ յառաջ

(1310 ապրիլ 7) շնորհակալու մտքը վճռեց էր Ստեանն որ ի ժողովոյ Հնգետասանից քննուած Հայոց թագաւորին խնդիրքն ընդունելի ըլլան, իբրու վճռուած ի Մեծ Ստեանէն: Ուրիշ վճիռ մ'ալ տրուած է նոյն օրերը (1310 ապրիլ 14), որպէս զի ի կիլիկիա գացող զեսպանը՝ վարձէ գարիթ մի տասնուհինգ կամ քսան նաւաստեօք և ոչ աւելի, առ ի տանել առ թագաւորն զսահմանեալ ընծայս: Բայց որովհետեւ նա արդէն վարձած էր մեծ խալէ մը իբր երեսունուիրեք կամ երեսունհինգ նաւաստեաց, առեանը կը զիջանի (1310 մայիս 30) թոյլ տալ նմա եթէ հաւանին գունդք նաւազին (Consules maritimi): Քիչ օրէն (3 յունիս) կը շնորհուի նմա կէս առ հարիւր շահէն առնուլ որչափ ինչ կարեոր է ի կառուցումն մթերանոցաց, և վենետաց հասարակապետութեան ի Հայս ունեցած ուրիշ կալուածոց, և եղած ծախքը ծանուցանել ի վենետիկ: Երկրայութիւն չկայ որ զեսպանին առաջին խնդիրը պիտի ըլլար Պարգևագրին նորոգութիւնը, զոր և կատարեց Օշին, ինչպէս կը վկայէ որդին իւր տուած Պարգևագրին մէջ. բայց որովհետեւ կորսուած է Օշնի պարգևածին պատճէնը, ուստի և անյայտ կը մնայ գրութեան թուականն:

Թագաւորին և իշխանազանց առ որս գրուեցան վերոյիշեալ թուղթք, անուանք ու պատուոյ կոչումն նշանակուած են ի գիրսն Patti (Գաշնագրութիւնք) յ'էջս 79—84, ուրիշ ազգաց համապատիւ և համանման իշխանաց և կարգինալաց անուանց հետ, իբրու յատկապէս սահմանուած երեսագիրք կամ հասցէ, և են հետեւեալքն.

Օշին թագաւորին՝ Hoissinu de Altitonanti, genere Ruppinorum: Alinac filius quondam Regis Armenie, Dominus Lambri, Montes Livonis, Gogolag (Guglag) et Caissi, (որ թուի թէ պիտի ըլլայ Covasso). Կրկին գրուած կայ իր հասցէն հետեւեալ կերպով. Alinach Regis frater et quondam Serenissimi Regis (Leoni II) filius.

Frater Johannes Ordinis Fratrum Minorum, Primogenitus quondam Serenissimi Regis Armenorum. ուր գրին կը յաւելու, nunc mortuus (այժմ վախճանեալ). բայց ուրիշ մը կ'ընթեռնու monacus (կրօնաւորեալ):

Օշին թագաւորին մահուընէն ետքը՝ յետագայ երեսագիրք կը գտնուին՝ ինչուան առ մեզ հասած.

Leo (IV) Rex Armenie.

Aytonus Seneschalcus Regis Armeniae.

Aytonus de Negrino Camberlanus et Gubernator Regni Armenie.

Կրկին գրուած կան ասոնց անուանքն De Harmenia խորագրաւ:

Aytonus Dominus Nigrini, Capitanus Curie Regis Herminorum.

Aytonus Conestabilis Hermenie.

Ի գիրս և ի յիշատակարանս գտնուած այդ անուններէն յայտնա-

պէս կ'երևի թէ Օջնի թագաւորութեան ատեն (1307 — 1320) յաճախ և սերտ էին փոփոխակի վերաբերութիւնք Հայոց ընդ վենետաց, ինչպէս նաև յետոյ իր որդւոյն ժամանակ, առ չորրորդ Լեւոնիւս Քանզի վերը յիշուած Գր. Տղֆին դեսպանին ի Հայաստան երթալէն քանի մը տարի ետքը, նոր դեսպանի պատրաստութիւն կը տեսնուի, և թերեւս նոր եկողի մը ի Հայոց. վասն զի նոյն տարւոյն (1310) սեպտեմբեր 24 ու հոկտեմբեր 10 թուականներով տրուած որոշմանց մէջ՝ Ատենը կը վճռէ Հայոց թագաւորէն իրենց ընծայ առաքուած մետաքսեայս ու ոսկեղիպակքը վաճառել (drapis setae, drapis ad aurum), որ հաւանականաբար Դամասկոսի կամ ուրիշ արևելեան քաղաքի մը հիւսուածք էին, ու անոնց գնով նոր դեսպանին յանձնել իրեն զրկուելիք ընծաները. և որովհետև չվաճառուեցան, և կ'ենթադրէին թէ անոնց արժէքն ըլլայ իբր քսան լիպրա կրոսից, սահմանուեցաւ որ նոյնչափ արժէքիւք ընծայք գնուին ու զրկուին առ թագաւորն: Որոշակի հետ կը յիշատակուի դեսպան Հայոց ի վենետիկ 1311 թուականին յուլիս ամսոյն տաանին. և որում կը շնորհուի անմաքս ի ցամաք հանել 560 թիակ ընդ մեծ և ընդ փոքր՝ ի կազմած երկու խալէից և միոյ նաւու Գրիգոր Տղֆինի տեղ ալ՝ որուն նոյն օրերը (յուլիս 17) հրաման եղաւ դառնալ Պէմպոյ Տարտի, խալէիւի (որ ի Հայոց և ի կիպրոսէ վաճառք վերցընելու հրամանն ընդունեցաւ, պայմանաւ որ ձրի տանի վենետիկեցի դեսպանն ի Հայս և ի Կիպրոս): Սահմանեցաւ դեսպան Նիկողայոս Մորիզինի, որոյ անունն կը յիշուի 1311 նոյեմբեր 10 թուականաւ տրուած վճռոյն մէջ, ուր խօսք կ'ըլլայ նաև Լիոնա նաւուն կահից և կազմածոց վրայ:

1314 տարւոյն սկիզբը (27 փետր.) կը յիշուի առ թագաւորն Հայոց զրկուած դեսպան և ընծայ, որոց համար հարկաւոր ծախքը պիտի լեցուեր կէս առ հարիւր բաժէն. և որովհետև չբաւեց այն, յօտարաց փոխ առնուելով՝ սահմանեցաւ ի մտից Պաշտօնէից Տոմոս (Officiales maris) հատուցանել պարտատեարց. իսկ սոյն պաշտօնէից ալ՝ յետոյ նոյն կէս առ հարիւր բաժիւ հատուցանել իրենց պահանջքը: Վրան քանի մը ամիս ետքը (1314 յուլիս 21) դարձեալ կը հրամայուի ընծայս պատրաստել Հայոց թագաւորին համար քսանուերկու լիպ. կրոսից արժէքով: Իսկ երկու տարիէն (1316, սեպտ. 5 և 9) ճոխագոյն ընծայք պատրաստուեցան Հայոց թագաւորին հարսանեաց համար, որ այրիացեալ կ'անցնէր յերկրորդ ամուսնութիւն ընդ Յովհաննայ Եռինէի՝ դստիւր Փիլիպպոսի իշխանին Տարենտայ. և սահմանեցաւ գին ընծայիցն՝ երեսուն լիպրա կրոսից, և թէ զայդ զրամ՝ հայթհայթիւ համար՝ դուքան և խորհրդականք կարենան փոխառութիւն մը ընել, ուստի և յաջողին, նաև տոկոսեօք, ի հատուցումն այս և ուրիշ կանխաւ եղած փոխառութեանց:

Կորուսեալ գործոց (actes) համառօտ գլխակարգութեան մը մէջ

կը նշանակուի վճիռ մ'ալ 1317 կամ յաջորդ տարւոյն մէջնոր դեպան մ'ալ զրկելու, որ առ ժամն կը խափանուի: Կը յիշուի դարձեալ ի դիմաց դքսին թղթոյ մը առաքումն առ թագաւորն Հայոց, ոչ ի ձեռն գեսպանի՝ ինչպէս թուի, որովհետեւ փր. Տանտոլոյ նէկրորոնդի Պայլը զրկեց զայն, ինչպէս կը ծանուցանէ առ դուքսն նամակաւն գրեալ ի 1318 յուն. 28, յորում նշանակէ և զգերիլ վաճառակիր խալէի կրիմանեան: յԱյսմ ի Սրինոլայ գենուացոյ:

Շարունակելի

ՌԱՓԱՅԷԼ ԵԴՈՒԱՐԴ ԴԱՐԱՄԵԱՆ

Յիսուն ու աւելի տարիներէ ի վեր՝ այս մեծախորհուրդ ու բարերար Անձին անունը՝ արժանապէս մեծարուած ու երախտապարտ սիրով հուշակուած է յազգէն, և իր ազգասիրութեան ու լուսաւոր մտաց վրայ սքանչացող յօտարաց. բայց կենսագրութիւնը սակաւուց թերեւս ծանօթ:

Կը փափաքինք այս պակասը լեցընել յետագայ էջերով. համուզուած թէ առաքինութիւնն՝ թէպէտ երբեմն ոչ գովելի նախանձու առիթ, այլ յաճախ նաև նախանձաւորութեան պատճառ մ'է. և բարւոյն օրինակը, — հարկ է, — խոստովանիլ ի պատիւ մարդկութեանս ապագայից ոչ լոկ իրաւացի զարմացմանն, այլ և հետևողութեան ու նմանելու գրգիռ եղած է և խրախոյս:

Այս մտքով կը հրատարակենք հետեւեալ քանի մը տեղեկութիւններն Ռափայելի Եդուարդայ վարուց վրայ, փափաքելով որ ինչպէս անունն անմահական է՝ առատածեռն տրովբը հաստատած դաստիարակութեան սրբավայրին մէջ, գովութիւնն ալ յարատեւ ըլլայ բարեմոյն և երախտագէտ սանիցը՝ վարուց, կրթութեան և ուսմանց յառաջադէմ զարգացմամբ:

Ղարամեան հին տոհմին սերունդ է Եդուարդ Ռափայել, — Ուստի կամ երբ եղած է այս տոհմին սկզբնաւորութիւնը:

Այս նկատմամբ՝ դժուարին է մեզ վաւերական և ճիշտ հաւաստեաց հանդիպիլ և հազորդել ընթերցողաց, երկարատեւ գերութեան, ու անդադար պատերազմաց և աւարառութեան ասպարէզ Հայաստան աշխարհ, չէ կրցեր նաև Եդուարդայ Ռափայելի ազնուական հնութեան տոհմագրութիւնն պահպանել կամ հասցընել մինչև առ մեզ:

Սակայն անտարակուսելի կը թուի թէ Ղարամեանց ազգատոհմը փառաւոր անցեալի մը հետ ունեցած ըլլայ նաև իր հին իշխանական ազնուականութիւնը: Եւ թէպէտ, ինչպէս կանխեցինք ըսել, վաւե-